

## **ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

### **ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՒ ՏԻԳՐԱՆԻ**

#### **ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)**

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

### **ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Ռազմիկի Դարբինյան**

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Տիգրան Սերյոժայի Մարտիրոսյան**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Անի Գրիգորի Ավետիսյան**

**Առաջատար  
կազմակերպություն՝**

**Երևանի պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հունիսի 8-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հ. Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 29-ին:

**008 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝**



**տ.գ.թ., դոցենտ  
Ի.Բ. Պետրոսյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հեղազոտության թեմայի արդիականությունը:** Արդի փուլում պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ինստիտուտը բոլոր երկրների համար հանդիսանում է կայուն զարգացման նպատակին հասնելու առավել արդյունավետ ուղիներից մեկը: Այդ իսկ առումով երկրների մեծ մասում, անկախ զարգացման մակարդակից, իշխանությունները ՊՄԳ-ն դիտարկում են ենթակառուցվածքային հիմնական ծառայությունների ապահովման լավագույն հնարավորությունը, որն էլ նպաստում է ներդրումների ավելացմանը, տնտեսական կայուն աճին, սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ու աղքատության մակարդակի նվազեցմանը:

ՀՀ-ում ինչպես և զարգացող երկրներում սահմանափակ են պետական ֆինանսական ռեսուրսները, որի հետևանքով ժամանակին և որակով չեն լուծվում բնակչության և տնտեսության համար բարձրորակ ծառայությունների ապահովման խնդիրները: Նման իրավիճակում կարևորվում է ՊՄԳ-ի ձևավորմն ու զարգացումը, որը միտված է ծառայությունների և ենթակառուցվածքային ոլորտների երկարաժամկետ և կայուն աճին:

Պետությանն ու բիզնեսի գործակցության հիմքում կարևորն այն է, որ պետությունը հավատարիմ է մնում իր սոցիալական և տնտեսական գործառույթների կատարման պատասխանատվությանը, իսկ բիզնեսն իր շահերից ելնելով ֆինանսական ներդրումներ է կատարում նման ծրագրերի համար և արագացնում է դրանց իրականացման ընթացքն ու նպաստում է այդ ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

ՊՄԳ բնույթը, մեթոդները և ձևաչափերը տարբեր երկրներում կարող են էապես տարբերել, կապված՝ ազգային տնտեսության առանձնահատկություններից, շուկայական հարաբերությունների հասունությունից: ՊՄԳ ինքնին ձևավորում է ինստիտուցիոնալ նոր միջավայր դրան բնորոշ գործընկերային հարաբերություններով և էական դեր է խաղում շուկայական կառուցվածքների և ընդհանուր առմամբ տնտեսության զարգացման գործում: ՊՄԳ գործընկերության ձևաչափը, ի տարբերություն ավանդական պետական գնումների, ձևավորում է կառավարման մոտեցումների, ֆինանսավորման, գույքային հարաբերությունների արդյունավետ ձևաչափեր և ամբողջական մոդելներ: ՊՄԳ համակարգը, ըստ էության, արդյունավետ համատեղում է երկու սուբյեկտների ռեսուրսներն ու ներուժը, պետության՝ մակրո կառավարման և կարգավորման, և մասնավոր բիզնեսի՝ ձեռնարկատիրական մակարդակով կառավարման, ներդրումների, նորարարությունների արդյունավետ յուրացման կարողությունները: Պետությունը առաջնորդվում է պետական բյուջետային միջոցների ռացիոնալ օգտագործման չափորոշիչով, իսկ մասնավոր գործընկերը՝ շահույթ ավելացնելու նպատակով ռեսուրսների օգտագործման արդյունավետությամբ, ճկունությամբ և նորարարությունների հանդեպ ընկալունակությամբ, որը բազմապատիկ արդյունք է հաղորդում ամբողջ գործընթացին:

Ըստ էության, ՊՄԳ ձևաչափը հնարավորություն է տալիս, առանց հանրային կյանքի մոդելի ու կառուցվածքի խորքային փոփոխությունների և դրան զուգորդող

անխուսափելի ցնցումների (որը տեղի ունեցավ անցումային շրջանում բազմաթիվ երկրներում), օգտագործել սեփականության երկու ձևերի առավելությունները:

ՊՄԳ արդի փորձը թույլ է տալիս, որ պետությունը, պահպանելով ազգային նշանակության ծառայությունների անվտանգության պահպանման լծակները, ներգրավելով դրանց կառուցման և շահագործման մեջ մասնավոր հատվածին, հնարավորություն է ստանում ներգրավել լրացուցիչ կապիտալ, այդ թվում՝ օտարերկրյա, թուլացնել բյուջետային լարվածության աստիճանը և ռիսկերի զգալի մասը փոխանցել բիզնեսի ոլորտ:

Հանրային ծառայությունների հատվածում, մասնավորապես՝ ենթակառուցվածքների ոլորտներում, պետական հատվածի և մասնավոր բիզնեսի միջև սեփականության իրավունքի վերաբաշխման փորձը վկայում է, որ ՊՄԳ-ի ձևաչափով մասնավոր հատվածին մի շարք առանցքային իրավասությունների պատվիրակմամբ պետությունը հասարակության առջև մնում է պատասխանատու հանրային ծառայությունների անխափան ապահովման համար: Սկզբունքորեն դրանով է բացատրվում ՊՄԳ-ի գրավչությունը ենթակառուցվածքային օբյեկտների արդյունավետ գործունեության համար, նկատի ունենալով նաև դրանց արդյունավետ կառավարումը, ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը:

Եվրամիության 2018 թ. «ՊՄԳ-ն ԵՄ-ում. Տարածված թերություններ և սահմանափակ առավելություններ» հատուկ զեկույցում նշվում է, որ ՊՄԳ ծրագրերը խթանում են հանրային և մասնավոր հատվածին մատուցել այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք ավանդաբար մատակարարվել են պետական հատվածի կողմից, որի արդյունքում թեթևացվում են պետական ծախսերի բյուջետային խիստ սահմանափակումները<sup>1</sup>:

ՀՀ-ի համար արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման արդյունավետ ուղիներից մեկը կարող են հանդիսանալ ՊՄԳ ծրագրերը: Վերոնշյալը վկայում է ՊՄԳ ինստիտուտների, կառույցների, մոդելների, դրա գործիքակազմի ձևավորման և զարգացման վերաբերյալ հետազոտությունների կարևորության մասին: Հետազոտության թեմայի ընտրության գործոններից է նաև հայաստանյան տնտեսագիտական դպրոցի կողմից ՊՄԳ հիմնախնդիրների խիստ հատվածային և մակերսային արձարծումը:

**Հեղազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է մշակել ՀՀ-ում ՊՄԳ-ի պետական կարգավորման բարելավման ուղիներն ու դրանց կառուցակարգերը, միջազգային պրակտիկայում ՊՄԳ ծրագրերում կիրառվող կազմակերպական և ֆինանսավորման առաջադեմ սխեմաների և դրանց կառուցակարգերի տեղայնացման մոտեցումները, ՊՄԳ ծրագրերի ներդրումային կայուն պլանֆորմի ձևավորման գործիքակազմն՝ ուղղված ՊՄԳ համապետական և տարածաշրջանային ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները.

---

<sup>1</sup> Public Private Partnerships in the EU: Widespread shortcomings and limited benefits // European Court of Auditors, Special Report, No 09, 2018, <http://publications.europa.eu/webpub/eca/special-reports/ppp-9-2018/en/>

- ուսումնասիրել ՊՄԳ-ի տեսամեթոդական հիմքերը և միջազգային զարգացումները,

- բացահայտել ՊՄԳ-ի ձևավորման հայեցակարգային և տեսամեթոդական մոտեցումներն ու սկզբունքները,

- բացահայտել միջազգային պրակտիկայում ՊՄԳ-ի օրենսդրական կարգավորման մոտեցումները և ծրագրերի իրականացման տարատեսակները,

- ներկայացնել ՊՄԳ տարածաշրջանային ծրագրերի ֆինանսավորման ինովացիոն փորձը Չինաստանում,

- վերլուծել ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը և դրանց ընդհանուր բնութագրիչները,

- վերլուծել ՀՀ-ում ՊՄԳ իրավակարգավորման վիճակը, իրականացված ոլորտային ՊՄԳ ծրագրերի հիմնական ձևաչափերը և առանձնահատկությունները,

- մշակել ՀՀ-ում ՊՄԳ կենսունակ ծրագրերի զարգացման հիմնական առանցքները և կառուցակարգերը, ներառյալ օրենսդրական հիմնախնդիրների կարգավորման մոտեցումները և ուղիները,

- մշակել ՊՄԳ կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացումն ու ակտիվացման առանցքները ՀՀ տարածաշրջանային ծրագրերի համար,

- մշակել ՊՄԳ ծրագրերի կառուցվածքային ֆինանսավորման կառուցակարգերի ներդրման ուղիները և դրա գնահատման գործիքակազմը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն է ՊՄԳ-ն և դրա ծրագրերը: Հետազոտության առարկան է ՀՀ-ում ՊՄԳ-ի պետական կարգավորման կատարելագործումը, միջազգային պրակտիկայում ՊՄԳ ծրագրերում կիրառվող կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների և դրանց կառուցակարգերի տեղայնացումը և ծրագրերի ներդրումային կայուն պլատֆորմի ձևավորումը:

**Արենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Արենախոսության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել ՊՄԳ-ի և քաղաքագիտական առումով պետություն և բիզնեսի միջև հարաբերությունների տեսություններն ու հայեցակարգերը.

ա) ՊՄԳ-ների հիմնախնդիրների և ազգային տնտեսության զարգացման վրա գործընկերության ազդեցության խնդիրների առումով հարկ է նշել Մ. Գերարդին, Ջ. Դելմոնին, Դ. Գրիմսեյին, Մ. Լյուիսին, Օ. Հարթին, Գ. Հոդջին, Կ., Ա. Բարդմանին, Ռ. Վեբին, և Բ. Պուլին, Դ. Դե Կլերկին, Է. Դեմենստերին, Վ. Հերոլենին, Ե. Հոփպենին, Պ. Սմիտցին, Վ. Գ. Վառնավսկուն, Ա. Վ. Կլիմենկոյին, Ա. Զվերկին:

բ) քաղաքագիտության տեսանկյունից պետության և բիզնեսի միջև հարաբերությունների և փոխգործակցության նշանակության, մոտեցումների, սկզբունքների և ձևերի նշանակալից հետազոտողների շարքում են. Է. Ասկինսոնը, Ջ. Ստիգլիցը, Պ. Սամուելսոնը, Ֆ. Ֆուկույաման:

գ) ՊՄԳ-ների կայացման և զարգացման խնդիրների առումով չափազանց կարևոր է միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների մասնագիտացված կառույցների՝ Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի կառույցների, Եվրամիության կառույցների, ՏՀԶԿ-ի, ԵԶՎԲ-ի, ՄԱՄԻԿ-ի (UNCITRAL), ԵԱՏՄ-ի,

Պետական-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կենտրոնի (Public-Private Infrastructure Advisory Facility (PPIAF)) «APMG International»-ի, Կորեայի զարգացման ինստիտուտի «Պետական-մասնավոր ենթակառուցվածքների ներդրումների կառավարման կենտրոնի» (Public Private Infrastructure Investment Management Center, Korea Development Institute (KDI) կողմից և դրանց հովանությամբ իրականացված ՊՄԳ-ի վերաբերյալ հրապարակված ուղեցույցները, գիտական, վիճակագրական և վերլուծական հրապարակումները:

դ) ՀՀ-ում ՊՄԳ հիմնախնդիրների շուրջ առանձին հարցերի լուսաբանումները, որոնց անդրադարձել են՝ Տիմոտի Հելենյակը, Սուդխարշան Կանազարաջը, Մ. Ի. Կուդելիչը, Ա. Խ. Մարկոսյանը, Ա. Վ. Խաչատրյանը:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՊՄԳ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեյի, ԵՏՀ-ի և Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները, զեկույցներն ու տարեգրքերը, միջազգային կազմակերպությունների ոլորտը լուսաբանող տեղեկատվական, վիճակագրական և հետազոտական փաստաթղթերն ու հրապարակումները, ինչպես նաև ոլորտի միջազգային և տեղական փորձագետների գնահատականները:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են համակարգային, վիճակագրական, գործոնային, իրավիճակային, գրաֆիկական վերլուծություններ, գիտական վերացարկման, մենագրային մեթոդները:

#### ***Արենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:***

Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումների և առաջարկությունների շրջանակներում համակարգված և ամբողջական մշակված կառուցակարգերով գիտական նորույթ են հանդիսանում ՀՀ-ում ՊՄԳ-ի զարգացման համար կարևոր հետևյալ դրույթները՝

1. Մշակվել են ՀՀ ՊՄԳ օրենքում բացահայտված խնդրահարույց հարցերի լուծումները, կապված՝ ա) մասնավոր գործըկերոջ կարգավիճակի, ծրագիրն իրականացնող կառույցում օտարերկրյա մասնակցության, ծրագիրը իրականացնող ընկերության ձախողման դեպքում մասնավոր և պետական գործընկերների միջև ռիսկերի բաշխման հետ, բ) ԵԱՏՄ շրջանակներում անդամ երկրների ՊՄԳ օրենսդրություններում բացահայտված միասնական տնտեսական տարածքում կապիտալի կամ ներդրումների ազատ տեղաշարժի «սահմանափակում» խոչընդոտ որակված իրավական կարգավորման մոտեցման հետ:
2. Մշակվել են ՊՄԳ ծրագրերի կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացնելու ակտիվացման հիմնական չափորոշիչներն ու կառուցակարգերը տարածաշրջանային, միջհամայնքային և համայնքային (ՏՀՄ) միավորների մակարդակով:
3. Մշակվել են ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի ֆինանսավորման և ներդրումային կայուն պլատֆորմի հայեցակարգն ու դրա մոտեցումները ուղղված՝ ակտիվների արժեթղթավորման կառուցակարգով կապիտալ ներդրումների համար անհրաժեշտ միջոցների ներգրավմանը, սահմանվել են արժեթղթավորման

փոփոխության բազային ակտիվների չափորոշիչները, ակտիվներով ապահովված արժեթղթերի արդյունավետ սպասարկման մոտեցումները:

4. Մշակվել է ցուցանիշների համախումբը, որով գնահատվում է ՊՄԳ ծրագրի իրականացնող ընկերության ֆինանսական վիճակի կամ «կենսունակության» փոփոխությունը, կապված՝ ակտիվների արժեթղթավորմամբ ռեսուրսների ներգրավման միջոցով կապիտալ ծախսեր իրականացնելու ներուժի հետ:

***Արենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:***

Արենախոսությունում առաջարկված մոտեցումներն ու լուծումները ուղղված են ՀՀ-ում ՊՄԳ հիմքով տնտեսության ենթակառուցվածքային ոլորտների կայուն զարգացմանը, մրցունակության և արդյունավետության բարձրացմանը: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի համար անհրաժեշտ պետական աջակցության արդյունավետ միջոցների մշակման և կիրառման համար:

Արենախոսության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ. ա) ՊՄԳ ոլորտի օրենսդրական կարգավորումների կատարելագործման համար, բ) ոլորտը համակարգող պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից զարգացումը ապահովող համալիր ծրագրերի, համապատասխան միջոցառումների և գործողությունների մշակման համար, գ) բուհերում «Պետական կառավարում», «Պետական ֆինանսներ» առարկաների դասավանդման, մասնագիտական վերապատրաստման դասընթացների, ինչպես նաև ոլորտի խնդիրների շուրջ հետազոտական աշխատանքների իրականացման համար:

***Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:***

Արենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են ՀՌՀ-ի Կառավարման, բիզնեսի և զբոսաշրջության ամբիոնում: Արենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

***Արենախոսության կառուցվածքը և ծավալը:***

Արենախոսության ծավալն ու կառուցվածքը պայմանավորված են գիտական հետազոտության նպատակով, խնդիրներով և տրամաբանությամբ: Արենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, այն շարադրված է 185 էջի վրա, պարունակում է 7 աղյուսակ , 8 գծապատկեր:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Արենախոսության **ներածությունում** հիմնավորվել է արենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են արենախոսության գիտական նորույթը, հիմնական արդյունքները և գիտագործնական նշանակությունը:

**Արենախոսության առաջին՝ «Պետական մասնավոր գործընկերության տեսամեթոդական հիմքերը և միջազգային զարգացումները»** գլխում ներկայացվել են ՊՄԳ ձևավորման հայեցակարգային տեսամեթոդական մոտեցումներն ու սկզբունքները: ՊՄԳ եզրույթը օգտագործվում է 20-րդ դարի 70-ական թվականներից,

իսկ սկսած 90-ական թվականներից, կապված՝ պետության միջոցով սոցիալ-տնտեսական միջավայրի մասշտաբային վերափոխման հետ, դարձել է արդիական մեկնաբանվող տեսագործական կատեգորիա: ՊՄԳ-ի հայեցակարգի բովանդակության շուրջ կան շատ նման մոտեցումներ ու նաև որոշ տարաձայնություններ: Այն չի ենթարկվում պարզ սահմանման, այդ իսկ պատճառով ՊՄԳ-ն հաճախ սահմանվում է «ազատ» կամ լայն ձևակերպմամբ, որպես պետական և մասնավոր հատվածի դերակատարների միջև համագործակցության ինստիտուցիոնալ ձևաչափ, որն ընդգրկում է բազմաթիվ հնարավորություններ<sup>2</sup>: Մյուս կողմից, ՊՄԳ-ն, որպես բարդ կատեգորիա առավել հաճախ սահմանում են հայտանիշներով:

Ռ. Վեբը և Բ. Պուլը նշում են, որ չկա ՊՄԳ-ի համընդհանուր սահմանում: Սահմանումներից մեկում նշվում է, որ ՊՄԳ-ն «պետական և մասնավոր հատվածի միջև փոխգործակցությունն է, կապված՝ ավանդաբար պետական հատվածի իրավասության ներքո գտնվող ծրագրերի նախագծման, պլանավորման, ֆինանսավորման, կառուցման և (կամ) գործող ծրագրերի հետ: ՊՄԳ-ը կոչվելու համար ծրագիրը կարող է չպարունակել բոլոր այդ հայտանիշները և կարող է ունենալ մի շարք ձևաչափեր<sup>3</sup>:

ՊՄԳ-ի լայն սահմանումների օրինակ է Համաշխարհային բանկի ՊՄԳ-ի ուղեցույցում տրված սահմանումը. «Մասնավոր կողմի և պետական սուբյեկտի միջև երկարաժամկետ պայմանագիր, ուղղված՝ հասարակությանը հանրային ակտիվներ և ծառայություններ տրամադրելուն, որում մասնավոր կողմը կրում է նշանակալի ռիսկ և կառավարման պատասխանատվություն, որի հատույցը կապված է դրա կատարողականի հետ:»<sup>4</sup>

Հատկանշանական է, որ ՊՄԳ կատեգորիան Եվրամիության մակարդակով նույնպես սահմանված չէ և այս դեպքում ևս այն բնութագրում են հայտանիշներով: Եվրամիության համապատասխան փաստաթղթում նշվում է, որ ընդհանուր առմամբ, ՊՄԳ հասկացությունը վերաբերում է պետական մարմինների և բիզնեսի միջև համագործակցության ձևերին, որոնք նպատակ ունեն ապահովել ենթակառուցվածքների ֆինանսավորումը, շինարարությունը, վերանորոգումը, պահպանումը, կառավարումը կամ ծառայությունների մատուցումը:

ՊՄԳ-ների օրենսդրական կարգավորման միջազգային պրակտիկայի հետ կապված Համաշխարհային բանկը նշում է, որ ՊՄԳ օրենքների անհրաժեշտությունը պայմանավորված է ոլորտային օրենսդրության նկատմամբ գերակայությունը ապահովելու, ՊՄԳ-ների մշակման, գնումների և իրականացման համար հստակ ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծման, ինչպես նաև օրենսդրական բացերի վերացման խնդրով, որոնք անհրաժեշտ են ՊՄԳ ենթակառուցվածքային ծրագրերի հաջող իրականացման համար: Դրանց շարքում են փոխատուների իրավունքների, բաց և արդար գնումների պահանջների գործընթացների ապահովումը: ՊՄԳ օրենսդրական

<sup>2</sup> Graeme A. Hodge, Carsten Greve and Anthony E. Boardman, «Introduction: the PPP phenomenon and its evaluation» // International Handbook on Public-Private Partnershipsh, 2010, 16 pages, <https://ideas.repec.org › elg › eecchap>

<sup>3</sup> Richard Webb, Bernard Puelle, «Public Private Partnerships: An Introduction» // Economics, Commerce and Industrial Relations Group, 2002, 36 pages, <https://www.aph.gov.au/binaries/library/pubs/rp/2002-03/03rp01.pdf>

<sup>4</sup> Public-Private Partnerships Reference Guide // International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2017, page 5, <https://library.pppknowledgelab.org/documents/4699?prevpage=home>



կարգավորման համատեքստում շեշտվում է կոնցեսիայի և գնումների մասին օրենքի անհրաժեշտությունն ու կարևորությունը<sup>5</sup>:

ՊՄԳ-ի հետ օրենսդրական կարգավորումները տարբեր երկրներում իրականացվում են տարբեր ձևերով: Մի շարք երկրներում ՊՄԳ-ի վերաբերյալ ընդունվել են հատուկ օրենքներ, երկրների մյուս խմբում օրենքով ամրագրում են ՊՄԳ-ի հիմնական սկզբունքներն ու գործիքները, իսկ ՊՄԳ-ի կարգավորումը իրականացվում է ենթաօրենսդրական ակտերով՝ կառավարության հատուկ որոշումների հիման վրա: Կան մի շարք երկրներ, որոնցում ՊՄԳ-ը չեն կարգավորվում հատուկ օրենքով, և խնդիրը կարգավորվում է գնումների մասին օրենքով և կոնցեսիոն պայմանագրերով:

Որպես կանոն, ՊՄԳ մասին հատուկ օրենքները ուղղված են տնտեսության ենթակառուցվածքների ոլորտներում ներդրումներ ներգրավմանը, պետական և մասնավոր գործընկերության համար օրենսդրական պայմանների որոշմանը, ինչպես նաև կարգավորում են ՊՄԳ-ի գործընթացի իրավական հարաբերությունները այդ թվում՝ համաձայնագրի կնքման, իրականացման և դադարեցման գործընթացը: ԵԱՏՄ երկրներում ՊՄԳ մասին հատուկ օրենքները ընդունվել են ՌԴ-ում (2015), Ղազախստանում (2015) Բելառուսում (2015) և Ղրղզստանում (2009) և ՀՀ-ում (2019):

ՊՄԳ ծրագրերի հաջող իրականացումը մեծամասամբ պայմանավորված է դրա ֆինանսավորման սխեմայի կառուցումով և իրականացումով: Այդ առումով հետաքրքիր է Չինաստանի փորձը, որը վերջին տարիներին դարձել է ՊՄԳ ծրագրերի ֆինանսավորման ինովացիոն առաջատարներից՝ հատկապես տարածաշրջանային և համայնքային ծրագրերի մակարդակով: Պրակտիկորեն ՊՄԳ մոդելը Չինաստանում սկսեցին կիրառել 2014 թ. և չորս տարիների ընթացքում նախաձեռնվել են ավելի քան 20 տրիլիոն յուանի ծավալով շուրջ 14 000 ծրագրեր, ինչը աներևակայելի մեծություն է նույնիսկ չինական չափանիշներով<sup>6</sup>: Չինաստանում ՊՄԳ մոդելի արագ զարգացումը կապված է տեղական ինքնակառավարման մարմինների պարտքերի խնդրի լուծման համար կենտրոնական կառավարության ջանքերի հետ:

**Արենախոսության երկրորդ՝ «ՊՄԳ ծրագրերի արդի վիճակը, ներուժը և իրավակարգավորումը ՀՀ-ում»** գլխում ներկայացվել են ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը և դրանց ընդհանուր բնութագրիչները: ՊՄԳ իրավակարգավորման խնդիրներին ՀՀ կառավարությունը որոշումների մակարդակով անդրադարձել է 2009 թ., 2012 թ. և 2017 թ., իսկ 2019 թ. հունիսի 28-ին Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ ընդունել է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը: 2009 թ. ՀՀ կառավարությունը հաստատել է ՊՄԳ հայեցակարգը ՊՄԳ-ն դիտարկելով ենթակառուցվածքային օբյեկտների շինարարության ֆինանսավորման, ինչպես նաև հանրային և պետական կարիքների ծառայությունների մատուցման կառավարման արդյունավետ մոտեցում, միտված միաժամանակ պետական ծախսերի կրճատմանն ու երկարաժամկետ աճի ապահովմանը: 2010 թ. ընդունվեց «Գնումների

<sup>5</sup> Public-Private Partnerships Laws / Concession Laws, Public-Private-Partnership Legal Resource Center, World Bank Group, <https://ppp.worldbank.org/public-private-partnership/legislation-regulation/laws/ppp-and-concession-laws>

<sup>6</sup> Michel Brekelman, China must put the 'private' into PPP, 2018, <https://asia.nikkei.com/Opinion/China-must-put-the-private-into-PPP2>

մասին» ՀՀ նոր օրենքը, որի կանոնակարգումները տարածվեցին նաև ՊՄԳ գործարքների վրա, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման և կոնցեսիոն գործարքները: Այդ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության 2012 թ. որոշմամբ սահմանվել է պետական գնումների ընթացակարգերի հետ թրթալեցող ՊՄԳ ծրագրերի իրականացման գնահատման և հաստատման կարգը<sup>7</sup>: ՊՄԳ-ի ծրագրերի կիրառված ձևաչափերից է նաև կոնցեսիոն պայմանագիրը: 2017 թ. վերջին կառավարությունը հաստատեց ՀՀ-ում ՊՄԳ-ի քաղաքականության փաստաթուղթը, որը հիմք դարձավ ՊՄԳ ՀՀ օրենքի նախագծի մշակման հիմքը:

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների ՀՀ-ում 1990–2018 թթ. ժամակահատվածում իրականացվել է թվով 15 ՊՄԳ ծրագիր՝ 2 248 մլն. ԱՄՆ դոլար ներդրումներով: ՊՄԳ ծրագրերը ՀՀ-ում իրականացվել են ենթակառուցվածքային ոլորտներում՝ էներգետիկա, երկաթգիծ, օդանավակայաններ, ջրամատակարարում, հեռահաղորդակցություն, ընդ որում, քանակային և գումարային առումով ավելի շատ ծրագրեր իրականացվել է էներգետիկայի ոլորտում՝ 5 ծրագիր ընդհանուր՝ 836 մլն. ԱՄՆ դոլար ներդրումներով: ՀՀ-ում տարբեր տարիներին ենթակառուցվածքների ՊՄԳ ծրագրերը ֆինանսավորող ընկերությունների շարքում են 4 ռուսական, 1 ֆրանսիական, 1 ամերիկյան, 1 արգենտինական ընկերություններ:

ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը դասվում են այսպես կոչված «դարչնագույն» (Brownfield) տիպին, որոնք բնութագրվում են նրանով, որ դրանք հիմնվել են գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերակառուցման վրա: ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերից որևէ մեկը չի դադարեցվել կամ ձախողվել, դրանք հանդիսանում են ակտիվ շահագործվող ենթակառուցվածքներ:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի իրականացումը հիմնվել է ա) ծրագրի իրականացվող նպատակային ստեղծված ընկերության հետ գործառույթների կառավարման պատվիրակման, բ) կոնցեսիոն, գ) երկարաժամկետ վարձակալության պայմանագրերի ձևաչափերի հիման վրա:

**Աղյուսակ 1**

**ԵԱՏՄ երկրներում ենթակառուցվածքային ոլորտներում 1990–2018 թթ. իրականացված ՊՄԳ ծրագրերը<sup>8</sup>**

	ՀՀ	Բելառուս	Ղազախստան	ՌԴ
ՊՄԳ ծրագրերի քանակը	15	6	39	354
Ներդրումներ, ընդամենը, մլն. ԱՄՆ դոլար	2 248	6 362	4 864	76 205
Մեկ ծրագրի հաշվով ներդ-մը, մլն. ԱՄՆ դոլար	149,9	1060, 3	124,7	215,3

<sup>7</sup> Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման եվ հաստատման կարգը հաստատելու մասին, Հայաստանի Հանրապետության կառավարություն, Ո թ ռ զ ու մ 20 սեպտեմբերի 2012 թվականի N 1241-Ն <https://www.arlis.am/>

<sup>8</sup> World Bank, Infrastructure Finance, PPPs & Guarantees, <https://ppi.worldbank.org/en/snapshots/country/armenia>

	[-] փակագծում ծրագրերի քանակն է և ներդրումների գումարը (մլն. ԱՄՆ դոլ.)			
Բնական գազ	[1] 0	[2] 5 500	[11] 604	[3] 12 993
S&S	[2] 333	[3] 859	[3] 1 528	[173] 3 126
Երկաթուղի	[1] 575	[1] 4	[1] 231	[2] 4 519
Էլեկտրաէներգետիկա	[5] 836	-	[18] 1 646	[114] 34 597
Օդանավակայաններ	[2] 304	-	[2] 31	[8] 2 120
Փոստ	-	-	[1] 75	[13] 2 265
Ճանապարհի համակարգ	-	-	[1] 740	[10] 10 373
Ջրամատ-րում, կոյուղի	[4] 200	-	-	[24] 3 185
Առաջն-ին բուժօգնության	-	-	-	[6] 708
Տրանսպորտ	-	-	-	[1] 2 318
Էներգետիկա	-	-	-	[1] 6
Չեղյալ, կազմալուծ-ված %	[0] 0	[0] 0	[12] 20.2	[3] 0
Տարեկ-ն միջին ներդրումը	125			

ՊՄԳ ծրագրերի շրջանակում կառավարման պատվիրակման պայամանգրի և երկարաժամկետ վարձակալության պայմանագրի ձևաչափերը կիրառվել են ՀՀ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների բնականոն աշխատանքը և զարգացումը ապահովելու համար: Երևանի «Երևանի ջրմուղկոյուղի» հետ իտալական «ACEA S.p.A» ընկերությանը պայմանագիրը իր տեսակի մեջ առաջինն էր, որը կնքվեց չորս տարով, հիմնվելով կատարողական ցուցանիշների (Key Performance Indicators, KPI) գնահատման համակարգի վրա: Տվյալ սխեման իր կառուցակարգով հիբրիդային էր և համատեղում էր կոնցեսիայի և վարձակալության տարրերը: Մասնավոր օպերատորի վրա պատասխանատվություն էր դրվել. ա) ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների շահագործման և պահպանման, բ) սպասարկումների դիմաց ծառայությունից օգտվող շահառուներին վճարման հաշիվների ներկայացման և վճարումների հավաքագրման համար: Բացի այդ, օպերատոր ընկերությունը կառավարում էր կապիտալ ներդրումների ֆոնդը, որը բաղկացած էր կառավարության ներդրումներից և համակարգի կարևոր տարրերի վերանորոգման և արդիականացման համար Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկից: Սահմանվել էին նպատակային 92 կատարողական ցուցանիշներ: Կատարողական ցուցիչների հիմքով կառավարման պատվիրակման պայմանագիրը տարբերվում է կոնցեսիայի և վարձակալության պայմանագրից և հիարկե ամբողջական մասնավորեցումից: Դրա հիմնական բնութագրիչներ էին. ա)

գործողության ավելի կարճ ժամանակահատվածը, բ) սեփականությունը պահպանելու և պետության ավելի լայն վերահսկողության հնարավորությունը, գ) միաժամանակ օպերատոր ընկերությանը կատարողական ցուցանիշների բարելավմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների հաջող իրականացման համար խրախուսելու մեխանիզմը, դ) պայմանագրի ավարտից հետո կատարողական ցուցանիշների բարելավման և սպասարկման որակի բարձրացման արդյունքներով կոնցեսիոներին կամ վարձակալին ընտրել ու ներգրավել ավելի բարենպաստ պայմաններով:

Ոլորտում իրականացված առաջին ՊՄԳ ծրագրի հաջող իրականացումից հետո ՊՄԳ նոր ծրագիրը շարունակվեց ֆրանսիական «Վեոլիա Գրուպ»-ի հետ, որը 2006-2016 թթ. կառավարել է մայրաքաղաքի ջրմուղ-կոյուղին՝ ի դեմս «Երեւան Զուր» ՓԲԸ-ի, և այնուհետև մրցութային կարգով կառավարել է հանրապետության ջրմուղ-կոյուղու բոլոր համակարգերը: «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ն 2016թ. նոյեմբերի 21-ին «Վեոլիա Գրուպ» «ՀՀ ԷԵԲՊ-ի և Զրային տնտեսության պետական կոմիտեի հետ վարձակալության եռակողմ պայմանագրով սկսած 2017թ. հունվարի 1-ից՝ 15-ամյա ժամկետով ստանձնել է ոլորտի միասնական օպերատորի պարտականությունները<sup>9</sup>:

Զրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը վկայում են, որ դրանք էական ազդեցություն ունեցան ոլորտում իրականացվող բարեփոխումների վրա, հանգեցրել են ինստիտուցիոնալ և կազմակերպական նոր լուծումների, որոնք մասշտաբացվել են ամբողջ ոլորտում: Դրանք կրում են երկարատև բնույթ, որը պահանջում է ընթացքում առաջացող խնդիրների ճկուն լուծումներ:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրի հաջող օրինակներից է «Հայկական երկաթուղու» կոնցեսիոն պայմանագիրը: 2008 թ. փետրվարի 13-ին Երևանում «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի և ՀՀ-ի միջև կնքվեց կոնցեսիոն պայմանագիր՝ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ն «Հարավկովկասյան երկաթուղի» («ՀԿԵ») ՓԲԸ-ին 30 տարի ժամկետով կոնցեսիոն կառավարման հանձնելու մասին<sup>10</sup>:

ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը հիմնականում իրականացվել են համապետական մակարդակով, և չեն ներառել տարածաշրջանային միջհամայնքային կամ համայնքային մակարդակը, բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի, որտեղ ՊՄԳ ծրագրերը մայրաքաղաքից և խոշոր քաղաքներից միևնույն մասնավոր գործընկերոջ միջոցով ներթափանցել են մարզային և համայնքային մակարդակ:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրեր իրականացնող կազմակերպությունը ներդրումների և գործունեության իրականացնելու համար պահանջվող ֆինանսավարումը ստացել է պետական և մասնավոր կողմից պայմանագրով նախապես նախանշված սխեմայով՝ ա) ներդրումային միջոցները մասնավորի կողմից նրա ստանձնած պարտավորությունների

<sup>9</sup> Վեոլիան Հայաստանում, <https://www.veolia.am/hy/mer-masin/mer-masin/veolian-hayastanowm>

<sup>10</sup> Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, Որոշում, 7 փետրվարի 2008 թվականի N 83-Ա, [www.artis.am](http://www.artis.am)

չափով կամ պետական կողմից՝ հասանելիության վճարների տեսքով, հատկացված սուբսիդավորումներից, բ) մատուցված ծառայությունների դիմաց ստացված վարձավճարներից: Ներդրումային պահանջվող միջոցների համար ՊՄԳ ծրագրերը իրականացնող ընկերությունները ֆինանսական ռեսուրսներ չեն ներգրավել: ա) բաժնետոմսերի կամ պարտատոմսերի տեղաբաշխմամբ կապիտալի շուկայից, բ) ներդրումային բնույթի երկարաժամկետ վարկեր և փոխառություններ չեն ներգրավել:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի իրականացման փորձը վկայում է, որ 2019 թ. վերջի դրությամբ երկրում ՊՄԳ-ների ինստիտուցիոնալ զարգացումը կարելի է բնութագրել կայացած, միևնույն ժամանակ, առկա են որոշ առանցքային խնդիրներ, որոնց լուծումները խիստ արդիական են ՊՄԳ ոլորտի ընդլայնման և արդյունավետության բարձրացման համար: Դրանց շարքում են. 1) օրենսդրական կարգավորման բարելավումը, 2) ՊՄԳ ծրագրերի համար ընդունելի նոր մոդելների տեղայնացումը, 3) ՊՄԳ ծրագրերի փորձարկումն ու ընդլայնումը տարածաշրջանային՝ միջհամայնքային և կամ համայնքային մակարդակով, 4) պետության կողմից ծրագրերի խթանման գործիքակազմի ընդլայնումն ու դրանց նպատակային գործադրումը, 5) ՊՄԳ ծրագրերի համար ներդրումային պլատֆորմի կայացումը՝ կապիտալի շուկայից երկարաժամկետ ներդրումային միջոցների ներգրավմամբ և ընթացիկ ֆինանսավորման գործիքակազմի յուրացմամբ ու ընդլայնմամբ, 6) պետական և մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխման առավել հավասարակշռող արդյունավետ մատրիցի կառուցումը:

***Արենախոսության երրորդ՝ «ՀՀ-ում ՊՄԳ կենսունակ ծրագրերի զարգացման հիմնական առանցքները և կառուցակարգերը»*** գլխում ներկայացվել են 2019 թ. ՀՀ-ում ընդունված ՊՄԳ օրենքի խնդրահարույց նորմերը, մասնավորապես. 1) Պետական և պետական մասնակցությամբ ընկերության հետ ՊՄԳ համաձայնագրի կնքման հնարավորությունը: 2) Սահմանափակումն առ այն, որ ՊՄԳ-ի կոնսորցիումի մասնակիցները կարող են լինել միայն իրավաբանական անձինք: ՊՄԳ ծրագրի կոնսորցիումի կազմում օտարերկրյա մասնակցի հանդես գալու հնարավորության անօրոշ մեկնաբանումը: 3) ՊՄԳ-ի դիտարկումը միայն պետական և մասնավոր գործընկերոջ միջև համաձայնագրի ձևաչափով և իրավական և ֆինանսական ինտեգրման այլ ձևաչափերի չնախատեսումը, այդ թվում՝ պետական և մասնավոր գործընկերոջ մասնակցությամբ, որը թույլ կտա օգտագործել ներդրումների լայն գործիքակազմ: 4) ՊՄԳ ծրագրի ձախողման դեպքում ռիսկերի կարգավորումը, երբ մասնավոր գործընկերը կորցնում է օբյեկտի սեփականությունը, իսկ փոխատու բանկը՝ գրավը: 5) Օրենքը չի նախատեսում նորմեր կապված՝ ծրագրի ձախողման դեպքում մասնավոր գործընկերոջ կատարված ներդրումների փոխհատուցման հետ: 6) Օրենքը չի սահմանում մասնավոր գործընկերոջ օպերատիվ գործունեության երաշխիքները, մասնավորապես՝ ծրագրի իրականացման համար ապրանքների, կապալառուների և ծառայությունների մատակարարներին ինքնուրույն որոշելու հնարավորությունը: 7) Օրենքում «հանրային գործընկերը» (անգլ. Public Partner) հավասարեցված է «պետական գործընկերոջը», ՏԻՄ-ըը հանդես են գալիս որպես հանրային սեփականատեր, որը պարունակում է թաքնված խոթեր ու միջազգային իրավունքի առումով խնդրահարույց է, և դատական հայցերի դեպքում խնդիրը կարող է լուծվել ի օգուտ մասնավորի: 8) Խնդրահարույց է իրավաբանական անձանց կոնսորցիումի

հանդես գալու դեպքում, ՊՄԳ պայմանագրի ստորագրումից հետո կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքի յուրաքանչյուր փոփոխության հաստատումը ՀՀ կառավարության կողմից: Դա կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ՊՄԳ ծրագրի կոնսորցիումի ձևավորման համար: 9) օրենքում տեղ չի գտել ՊՄԳ առաջարկը սեփական նախաձեռնությամբ, այն է՝ մասնավորի կողմից ներկայացնելու դրույթը, որը նախատեսված էր ՀՀ կառավարության 2017 թ. ՊՄԳ քաղաքականության փաստթղթում:

Վերը նշված խնդիրները, կարգավորման առարկայի և բնույթից ելնելով, պետք է համարժեք լուծումներ ստանան օրենքում, քանի որ դրանք չեն կարող բավարար լուծումներ ստանալ բացառապես ՊՄԳ պայմանագրի շրջանակում:


ՊՄԳ-ի օրենսդրական կարգավորման խնդիրները առկա են նաև ԵԱՏՄ-ի շրջանակներում: ԵԱՏՄ-ի իրավական կարգավորման համաձայն միության ներքին շուկայի գործունեության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատանքի ազատ տեղաշարժի խոչընդոտներ չպետք է լինեն, դեռ ավելին այդ կարգի խոչընդոտները հանդիսանում են ԵԱՏՄ-ի իրավունքի խախտում և դրանց նկատմամբ անմիջապես ձեռնարկվում են վերացնելու միջոցառումներ:

ՊՄԳ-ի հիմնական նպատակներից է մասնավոր ներդրումների, այդ թվում՝ ՕՈՒՆ ներգրավումը, իսկ ՌԴ-ի, Բելառուսի և ՀՀ-ի օրենքների սահմանումները ուղղակի արգելափակում են ՊՄԳ ծրագրերում ՕՈՒՆ-ների ներգրավումը անգամ անդամ երկրներից: Նշված երեք երկրների օրենքների խնդրո առարկան կայանում է նրանում, որ օրենքով սահմանվում է, որ մասնավոր գործընկերը տվյալ երկրի իրավաբանական անձ է, որի հետ համաձայնագիր է կնքվել օրենքի համաձայն: Ղազախստանի և Ղրղստանի օրենքները առավել համահունչ են եվրոպական երկրների օրենքներին և նման սահմանափակում չեն պարունակում:

Երրորդ գլխում ներկայացվել է ՊՄԳ կազմակերպական և ֆինանսավորման պիտանների տեղայնացումն ու ակտիվացման առանցքները ՀՀ տարածաշրջանային ծրագրերի համար: ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի ընդլայնման համար խիստ արդիական է. 1) ՊՄԳ ծրագրերի ընդունելի նոր մոդելների տեղայնացումը, 2) ՊՄԳ ծրագրերի իրականացումը տարածաշրջանային միջհամայնքային և կամ համայնքային (ՏՄՀ) մակարդակով, 3) ՊՄԳ ծրագրերի համար կապիտալի շուկայից երկարաժամկետ ներդրումային միջոցների և ընթացիկ ֆինանսավորման ներգրավման գործիքակազմի յուրացումն ու ընդլայնումը, 4) պետական և մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխման առավել հավասարակշռող արդյունավետ մատրիցի կառուցումը:

ՊՄԳ ծրագրերի իրականացումը ՏՄՀ մակարդակով կնպաստի ՀՀ տարածաշրջանային համաչափ զարգացման ռազմավարական խնդրին: ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրերի ակտիվացման առանցքային խնդիրները կապված են ծրագրերի մասշտաբների, տևողության, ներդրումների և ֆինանսավորման ծավալների և դրանց աղբյուրների, երաշխիքների և ռիսկերի երկկողմ հավասարակշռման հետ: Ըստ այդմ, ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրի կենսունակության ապահովման հիմնավորումներում հարկ է սևեռվել. 1) Ծրագրի է դրամական հոսքերի՝ եկամուտների և ծախսերի գնահատման, դրանից բխող գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշների և ներդրումների հետզնման ժամկետի կանխատեսվող

գնահատման վրա: 2) Հանրային ՏԻՄ գործընկերոջ (մի քանի ՏԻՄ-րի) կողմից բյուջետային ռեսուրսներով մասնակցության քանակական գնահատման, մասնավորապես. ա) բյուջեից ստացվող դրամաշնորհների, սուբսիդավորումների, այդ թվում՝ հարկային արտոնություններից ստացվող միջոցների, բ) բյուջե վճարվող գումարների՝ հարկերի ու տուրքերի և մուտքերի ու վճարումների զուտ արժեքի կանխատեսումների վրա: Ծրագրի կենսունակության առանցքային խնդիր պետք է դիտարկել. ա) ՏՄՀ մակարդակով ծրագրի համար համակարգող ՏԻՄ մարմնի որոշումը, ծրագրի մասնակից ՏԻՄ-րի ընտրությամբ, բ) մի քանի ՏԻՄ-րի բյուջետային միջոցների համախմբումը ՊՄԳ ծրագրի աջակցության առումով, գ) պետական բյուջեից ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրին դրամաշնորհների և սուբսիդիաների, սուբվենցիաների, ինչպես նաև երաշխիքների ձեռքբերումը, ելնելով նրանից, որ ՏԻՄ-րի բյուջեների ֆոնդային մասը նման խնդրների առումով խիստ սահմանափակ է: 3) ՊՄԳ մեխանիզմների օգտագործմամբ ծրագրի համեմատական առավելության գնահատումը, կապված՝ ա) ներդրումների և փոխառությունների դյուրին և երկարաժամկետ ներգրավման, բ) ապագայում օբյեկտի շահագործման կայուն հոսքերի հետ: 4) Ծրագրի ռիսկերի քանակական ազդեցության գնահատումը՝ առանձին մասնավոր և համայնքային (պետական) գործընկերների համար, ռիսկերի կառավարումը և մասնավորապես՝ դրանց կանխարգելումը:



**Գծապատկեր 1. ՊՄԳ-ի «DBFOM» բազային սխեմայի կառուցվածքը**

ՀՀ-ում ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրերի համար առավել նպատակահարմար է կիրառել սպառող շահառուների ծառայությունների համար վճարումների վրա սխեման: Դրա հիմքում DBFOM (Design-Build-Finance-Operate-Maintain) «նախագծում,

շինարարություն, ֆինանսավորում, շահագործում և սպասարկում» բազային սխեման է (ներկայացված է գծապատկերում): Դրանում ընթացիկ ծախսերը, ներառյալ՝ օբյեկտի շահագործման և պահպանման ծախսերը, հիմնականում կծածկվեն ծառայությունների մատուցումից առաջացող հասույթից, ինչպես նաև բյուջեի խողովակով՝ հասանելիության պարբերական վճարներից՝ հիմնված ՊՄԳ պայմանագրով սահմանված կատարողական ցուցանիշների (KPI) և այլ սուբսիդավորումների ձևաչափերի վրա:

ՊՄԳ ծրագրերի հիմնական փուլի ֆինանսավորման առումով հարկ է նկատել, որ ՊՄԳ ծրագրերը ֆինանսավորվում են տարբեր աղբյուրներից և տաբեր մոդելներով: ՊՄԳ ծրագրերի հիմնական խնդիրը կայանում է ծրագրի սեփական և փոխառու միջոցների համակցությանն ու դրանց ճկունության ապահովման մեջ: Իրատեսական լինելու համար ՀՀ-ում ՏՄՀ մակարդակով պետական ֆինանսավորումը ՊՄԳ ծրագրի հիմնական փուլի համար հիմնականում պետք է բացառել, քանի որ ՏԻՄ-րի բյուջեները (ֆոնդային մասը) խիստ սահմանափակված են ռեսուրսներով և ունեն ֆինանսավորման տարբեր առաջնահերթություններ: Նշված բացառումը պահանջում է դրա որոշակի փոխհատուցում, ի հաշիվ՝ ծրագիրն իրականացնող ընկերության լեերեջի մեծացման: ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրերի ֆինանսավորման կազմակերպական կառուցվածքի առումով նախընտրելի մոդելը մասնավոր ներդրողի (կամ կոնսորցիումի) կողմից (և կամ պետական մասնակցի հետ համատեղ) ծրագրի իրականացման հատուկ ընկերության ստեղծումն է (ԾԻՀԸ):

ՀՀ-ում համապետական և ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրերի ֆինանսավորման բազան ընդլայնելու և դիվերսիֆիկացնելու համար նպատակահարմար է ԾԻՀԸ կապիտալի շուկա մտնի. ա) ՊՄԳ հատուկ պարտատոմսերով, պայմանական՝ «ՊՄԳ պարտատոմսեր», բ) ակտիվների արժեթղթավորման հիմքով թողարկված պարտատոմսերով: Թողարկման հաջող տեղաբաշխումը ապահովելու նպատակով այդ պարտատոմսերը պետք է ապահովել ՀՀ կառավարության կամ ՊՄԳ օրենքով նախատեսված «ՊՄԳ ծրագրերի զարգացման ֆոնդի» երաշխիքով: Ծրագրի սովորական և ակտիվներով ապահովված պարտատոմսերի թողարկման որոշման մեջ և ազդագրում պետք է սահմանվի դրույթ առ այն, որ պարտատոմսերի սեփականատերը կարող է դրանք վաղաժամկետ վերադարձնել մարման՝ ա) դրանց «ապացուցական» (securities delisting) դեպքում, բ) և/կամ ՊՄԳ ծրագրի դադարեցման դեպքում, գ) և/կամ ծրագրի իրականացնող ընկերության նկատմամբ և մասնակցությամբ դատական հայցերի դեպքում:

Կապիտալի շուկայից միջոցների ներգրավումը կապահովի. 1) ՊՄԳ ծրագրերի. ա) փուլայնությունը, բ) ֆինանսավորման դիվերսիֆիկացումը, գ) մշակման փուլում ֆինանսավորման արդյունավետ մոդելի ընտրությունը, համադրելով այն ՊՄԳ ծրագրի ոլորտի, տիպի, տևողության և այլ բնութագրիչների հետ: 2) էականորեն կրնդլայնի ներդրողների, մասնավորապես՝ պորտֆելային ներդրողների շրջանակը, ներառելով բնակչության և տնտեսվարողների ազատ կուտակային միջոցները: Հնարավորություն կստեղծվի ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ձևավորված երկար ներդրումային ռեսուրսները ուղղել երկրի ենթակառուցվածքների զարգացման համար պահանջվող ներդրումներին:



ՊՄԳ ծրագրերում ակտիվների արժեթղթավորման եղանակով միջոցների ներգրավման համար առավել ընդունելի տեսակներ են. ա) ֆինանսական ակտիվների արժեթղթավորումը (Asset Backed Securities – ABS), բ) ապագա դրամական հոսքերի արժեթղթավորումը (Future Flow Securitisation), որոնք նպատակահարմար է օգտագործել միաժամանակ կամ խառը տարբերակով, ինչն հնարավորություն կտա ընդլայնել բազային ակտիվների փուլի (պորտֆելի) հիմքը և բարձրացնել այդ ակտիվներից ակընկալվող դրամական հոսքերի կայունությունը:

Առաջարկվել են ՊՄԳ ծրագրերի շրջանակում ակտիվների արժեթղթավորման գարծարքի բազային ակտիվների համար ընդունելի չափորոշիչներն ու պահանջները. ա) դրանք հստակ անվանումը և նույնականացնելու այլ հայտանիշների առկայությունը, բ) այդ ակտիվներով իրականացվող գործարքների օրենսդրական պահանջների պահպանումը: Մասնավորապես՝ փուլի բազային ակտիվի նկատմամբ պետք է բացառել այլ կողմի օրինական պահանջների ներկայացումը, որպեսզի դրանք չհայտնվեն պարտապանի կողմից իր իրավունքների պաշտպանության իրացման պաշտպանիչ պահանջների տակ, գ) այդ ակտիվներով անկախ և կանխատեսելի կայուն դրամական հոսքեր գեներացնելու կարողությունը, դ) ակտիվներին բնորոշ ներդրումների երկակարածամկետ հետգնումը:

ՊՄԳ ծրագրերի շրջանակում ակտիվների արժեթղթավորման գործարքի հաշվարկային (քանակական) հիմնավորման հիմնական չափորոշիչ է առաջարկվել դիտել այդ գործընթացի համար պահանջվող ծախսերի չափը, իսկ համադրելի բազան՝ շուկայում ձևավորված բանկերի վարկերի տոկոսադրույքը: Փողի դիմաց արժեքի (ՓՂԱ) գնահատման համեմատման միավորը տվյալ դեպքում բանկային վարկերի տոկոսադրույքն է: Այն դեպքում, երբ արժեթղթավորման պահանջվող ծախսերի չափը կամ արժեքը՝ ակտիվների միավորի հաշվով բարձր է բանկային տոկոսադրույքից, արժեթղթավորումը կորցնում է իմաստը:

ՊՄԳ ծրագրերի շրջանակում ակտիվների արժեթղթավորման գործարքի բազային ակտիվների փուլի՝ միատարր կամ համասեռ եկամտաբեր ակտիվների ձևավորման համար առաջարկվել է որպեսզի արժեթղթավորման բազային ակտիվների փուլը կազմավորող և ապահովված արժեթղթերի թողարկող «ՆԹԸ»-ին (SPV) ակտիվներ վաճառեն նաև ՊՄԳ ծրագրի ԾԻՀԸ-ի ներդրողները և փոխկապակցված այլ անձինք, եթե այդ ակտիվները համապատասխանում են արժեթղթավորման բազային ակտիվներին ներկայացվող պահանջներին: Այն կլուծի երկու խնդիր. ա) կընդլայնվի արժեթղթավորման ակտիվների փուլի բազան, բ) ներդրողները հնարավորություն կստանան համալրել ԾԻՀԸ-ի կապիտալը գույքային ձևով, իսկ ԾԻՀԸ դրանք կստանա դրամական տեսքով:

ՊՄԳ ծրագրի և դրա շրջանակում իրականացվող ակտիվների արժեթղթավորման ժամանակահատվածների համաձայնեցման համար կարող է կիրառվել երկու այլընտրանք՝ ա) փուլային կամ պարբերաբար թողարկումների իրականացում, որը առավել նախընտրելի է, բ) ապահովված երկար ժամկետով թողարկված արժեթղթերի համար բազային ակտիվների պարբերաբար նոր գնումների կամ «ռոլօվերի» (Rollover) իրականացում, որն անհամեմատ բարդ է և խոցելի:

Ատենախոսությունում առաջարկվել է ՊՄԳ ծրագրի իրականացնող ընկերության՝ ՊՄԳ ծրագրի իրականացնող ընկերության՝ ԾԻՀԸ-ի ֆինանսական վիճակի փոփոխության գնահատման և մոնիթորինգի ցուցանիշների համախումբը և դրանց ուղենիշային արժեքների ընդունելի միջակայքը, կապված՝ ակտիվների արժեթղթավորմամբ ռեսուրսների ներգրավման միջոցով կապիտալ ծախսեր իրականացնելու ներուժի հետ: Գնահատման ցուցանիշների կազմում ներառված են՝ «Պարտավորություններ սեփական կապիտալ հարաբերակցության», «Պարտքի սպասարկման ծածկույթի գործակցի», «Փոխառության կյանքի ծածկույթի գործակցի» և Կապիտալ ծախսերի ցուցանիշը («CapEx»):

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց հիման վրա մշակված առաջարկությունները ընդհանրացվել են **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում:

ՊՄԳ-ների մոդելներն ու կառուցվածքը բազմազան են, միևնույն ժամանակ, ունեն որոշ բնութագրական հայտանիշներ, որոնցով ՊՄԳ տարբերակվում է որպես առանձին տնտեսական կատեգորիա: ՊՄԳ-ն պետական և մասնավոր կառույցների ձևայնացված համագործակցություն արդյունք է, որն ունի նպատակադրում և հիմնված է գործընկերների միջև պայմանավորվածությունների վրա, համատեղում է ընդհանուր նպատակադրումներին հասնելու քայլերը, միավորում ռեսուրսները, բաշխում ռիսկերը, հավասարակշռում շահերը:

Առաջարկվում է. ՀՀ ՊՄԳ օրենքի մասնավոր գործընկերոջ սահմանման հիմք ընդունել Սերբիայի ՊՄԳ օրենքի սահմանումը, հետևյալ խմբագրությամբ՝ «մասնավոր գործընկերը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, տեղական կամ օտարերկրյա, օտարերկրյա մասնակցությամբ կամ առանց դրա, կամ մեկ կամ մի քանի նման ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կոնսորցիում է, ինչպես նաև մասնավոր գործընկերոջ և պետական կամ հանրային գործընկերոջ հետ հիմնված ընկերություն է»: Դրանով կլուծվեն պետական և պետական մասնակցությամբ ընկերության հետ ՊՄԳ համաձայնագրի կնքման հնարավորությունը, ասահմանափակումն առ այն, որ ՊՄԳ-ի կոնսորցիումի մասնակիցները կարող են լինել միայն իրավաբանական անձինք, ՊՄԳ ծրագրի կոնսորցիումի կազմում օտարերկրյա մասնակցի հանդես գալու հնարավորությունը:

ՌԴ-ի, Բելառուսի և ՀՀ-ի ՊՄԳ օրենքների սահմանումները ուղղակի արգելափակում են ՊՄԳ ծրագրում ՕՈՒՆ-ների ներգրավումը անգամ ԵԱՏՄ անդամ երկրներից: Այս դեպքում խնդիրը ուղղակի վերաբերվում է ԵԱՏՄ-ի շրջանակներում կապիտալի միասնական շուկային: Դա ըստ էության, պետք է որակել որպես տնտեսական միասնական տարածքում կապիտալի կամ ներդրումների շուկայի իրավական «սահմանափակում», քանի որ տվյալ դեպքում ԵԱՏՄ կապիտալի կամ ներդրումների ազատ տեղաշարժի խոչընդոտը առաջանում են տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման սահմանափակման (ոչ բացակայության) պատճառով, ինչպես դա որակվել է՝ «Եվրասիական տնտեսական միության արգելքները, բացառությունների և սահմանափակումները» հատուկ հաշվետուության մեջ կամ «Սպիտակ գրքում»: Ընդ որում, այն չունի հիմնավոր և

համարժեք բացատրություն միության սկզբունքների իրավական կարգավորման առումով:

ՀՀ-ի կողմից պետք է ԵԱՏՄ հանձնաժողովի քննարկման առարկա դարձնել ԵԱՏՄ անդամ երկրների ՊՄԳ օրենքներում անդամ երկրների մասնավոր գործընկերոջ մասնակցությունը ՊՄԳ ծրագրերում:

ՀՀ ՊՄԳ օրենքով սահմանված մասնավոր կողմի իրավաբանական անձանց կոնսորցիումի կազմում մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքի յուրաքանչյուր փոփոխության հաստատումը ՀՀ կառավարության կողմից նորմը (15-րդ հոդվածի 3-րդ մաս) նպատակահարմար է սահմանել նշված փոփոխության վերաբերյալ տեղեկացման ռեժիմով և կառավարության կողմից դրա արգելափակումը գործադրել բացառապես այն դեպքում, երբ դա կարող է հիմնավոր ռիսկեր պարունակել ծրագրի հետագա ընթացքի համար:

SUՀ մակարդակով ՊՄԳ ծրագրի հաջող կատարումն ու ռիսկերի կառավարումը պահանջում է գույքային համալիրի իրավական կարգավորում, դրանում ներառելով. ա) կառուցվող, վերակառուցվող և կամ ընդլայնվող օբյեկտի նկատմամբ մասնավոր գործընկերոջ սեփականության իրավունքի առաջացման պայմանները, կարգը և ժամկետի ամրագրումը, բ) մասնավոր գործընկերոջ կողմից ՊՄԳ ծրագրի նպատակով և արդյունքում կառուցված և կամ ձեռքբերված գույքային և ոչ գույքային ակտիվների վարձակալության և կամ հավատարմագրային կառավարման հանձնելու և կամ օտարելու հնարավոր դեպքը և պայմանները, գ) ծրագրի գույքի, գույքային իրավունքների՝ գրավադրման իրավունքի իրացումը՝ ոչ պայմանական և պայմանական կարգով և վերջինիս համաձայնեցումը մի քանի ՏԻՄ հանրային գործընկերների հետ, դ) ՊՄԳ ծրագրի շահագործման ընթացքում օբյեկտի պահպանման և շահագործման կատարվող ծախսերի իրականացման կարգն ու դրա պայմանների սահմանումը: Մասնավորապես՝ շահագործումից ստացվող հասույթները և ծրագրի պետական գործընկերոջ հատկացումները, ամրագրելով ծրագրում մասնակից յուրաքանչյուր ՏԻՄ-ի մասնաբաժինը, ե) օբյեկտի կառուցման և հետագայում շահագործման փուլում դրա վաղաժամկետ դադարեցման դեպքում մասնավոր գործընկերոջ ներդրումների փոխհատուցման կարգը, քանի որ այդ խնդիրը համարժեք լուծում չի ստացել ՀՀ ՊՄԳ-ի օրենքում:

SUՀ մակարդակով ՊՄԳ ծրագրի կենսունակության ապահովման առաջնային խնդիրներից է. ա) SUՀ մակարդակով ծրագրի գլխամասային կամ համակարգող ՏԻՄ-ի և ծրագրի մասնակից ՏԻՄ-րի ընտրությունը, բ) ՊՄԳ ծրագրի աջակցության նպատակով ՏԻՄ-րի բյուջետային միջոցների համախմբումը, գ) պետական բյուջեից դրամաշնորհների և սուբսիդիաների, սուբվենցիաների, ինչպես նաև երաշխիքների իրատեսական գնահատումը:

Առաջարկվում է ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի զարգացման ֆոնդի միջոցով բացի ՊՄԳ-ի նախապատրաստական փուլի ֆինանսական աջակցությունից, իրականացնել նաև ֆոնդի միջոցով ծրագրի իրականացման ընթացքում աջակցությունը, մասնավորապես՝ ներդրումների ներգրավման գործընթացի համար երաշխավորությունների տրամադրումը:

ՀՀ-ում ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ծրագրերի միջոցառումների ստանդարտացման դեպքում նախապատրաստական փուլի տևողության իրատեսական ժամկետ կարող է կրճատվել մինչև 18 ամսի, որը իրական խթան կհանդիսանա ՏՄՀ մակարդակով ՊՄԳ ներդրողների համար և. ա) կբարձարցնի մասնավոր ներդրումների ներգրավելու հավանականությունը, բ) կնպաստի մրցույթին լրացուցիչ մասնակիցների ներգրավմանը, այդպիսով անուղակի կբարելավի պետական գործընկերոջ համար ՊՄԳ պայմանագրի պայմանների առաջադրումը:

### **Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Գոռ Սարգսյան, «Պետական-մասնավոր գործընկերության ժամանակ առաջացող ռիսկերի կառավարումը» // ՀՌՀ Լրաբեր, Երևան, №3, 2019, էջեր՝ 71-77:
2. Գոռ Սարգսյան, «Peculiarities of the Application of Public-Private Partnership in the UK» // 3<sup>rd</sup> International Scientific Conference «Science and Society» by SCIEURO in London, Լոնդոն, 2019, էջեր՝ 54-61.
3. Գոռ Սարգսյան, Անահիտ Գալանտերյան, «Պետական-մասնավոր գործընկերությունը որպես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործիք» // Ֆինանսներ և Էկոնոմիկա, №7 (215), Երևան, 2018, էջեր՝ 83-87:
4. Գոռ Սարգսյան, «Использование трудовых ресурсов сферы информационных технологий способом государственно-частного партнерства» // Сборник статей международной научно-практической конференции «Экономико-правовые и социально-культурные аспекты взаимодействия и сотрудничества в интернациональном обществе», Մոսկվա, 2019, էջեր՝ 139-142:
5. Գոռ Սարգսյան, Անահիտ Գալանտերյան, «Պետական-մասնավոր գործընկերության զարգացումը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում» // «Հանրային կառավարում» գիտական հանդես, №2, Երևան, 2019, էջեր՝ 20-30:
6. Գոռ Սարգսյան, «Պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական հիմնախնդիրների կարգավորման մոտեցումներն ու հնարավոր լուծումները ՀՀ-ում» // «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, №7, Երևան, 2019, էջեր՝ 68-78:
7. Գոռ Սարգսյան, «ՀՀ-ում պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի կառուցվածքային ֆինանսավորման հիմնախնդիրները» // ՀՌՀ Լրաբեր №2, Երևան, 2019, էջեր՝ 101-123:

**ФОРМИРОВАНИЕ ЭФФЕКТИВНЫХ МЕХАНИЗМОВ ГОСУДАРСТВЕННО-  
ЧАСТНОГО ПАРТНЕРСТВА (НА МАТЕРИАЛАХ РА)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 08-ого июня 2021 года, в 14<sup>00</sup>, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

**Р Е З Ю М Е**

В современном мире институт государственно-частного партнерства (ГЧП) является одним из наиболее эффективных способов достижения цели устойчивого развития для всех стран. ГЧП создает новую институциональную среду с партнерскими отношениями и играет важную роль в развитии рыночных структур и экономики в целом. В этой связи, в большинстве стран, независимо от уровня их развития, ГЧП рассматривают в качестве наилучшей возможности для предоставления базовых инфраструктурных услуг, которые способствуют увеличению объема инвестиций, устойчивому экономическому росту, развитию социальной инфраструктуры и сокращению бедности.

В Армении, как и во многих развивающихся странах, финансовые ресурсы государства ограничены, в результате чего своевременно не решаются проблемы предоставления качественных услуг населению и экономике. В сложившейся ситуации придается важное значение формированию и развитию ГЧП, нацеленному на устойчивый и долгосрочный рост сферы услуг и инфраструктуры.

Все вышеперечисленное, а также небольшое количество исследований по данной проблематике в отечественной научной литературе, обусловило выбор темы диссертации.

**Объектом исследования** является ГЧП и его программы.

**Предметом исследования** является совершенствование государственного регулирования ГЧП, локализация организационных и финансовых схем и механизмов, используемых в проектах ГЧП в международной практике, а также разработка устойчивой инвестиционной платформы для проектов ГЧП в РА.

**Целью диссертации** является разработка подходов и механизмов совершенствования государственного регулирования ГЧП в РА, имплементации организационных и финансовых схем, используемых в проектах ГЧП в международной практике, а также инструментария формирования эффективной платформы инвестирования для реализации проектов ГЧП на национальном и региональном уровнях.

Для решения вышеупомянутой цели были решены определенные задачи и проблемы по реализации эффективных схем и матрицы финансирования ГЧП. Среди наиболее важных задач необходимо выделить следующие:

- выявить концептуальные и теоретико-методологические подходы и принципы к формированию ГЧП;

- выявить подходы к законодательному регулированию ГЧП и разновидности реализации их программ в международной практике;
- проанализировать программы ГЧП, реализуемые в Республике Армения, а также дать их общую характеристику;
- проанализировать состояние правового регулирования ГЧП в Республике Армения, основные направления и особенности реализуемых отраслевых программ;
- разработать основные положения и механизмы создания жизнеспособных программ ГЧП в РА, включая пути и подходы к проблемам законодательного регулирования.
- разработать механизмы имплементации и активизации схем организации и финансирования ГЧП для региональных программ РА;
- разработать пути имплементации механизмов структурного финансирования программ ГЧП и инструментарий ее оценки.

Наиболее важные результаты исследования, содержащие **научную новизну**, включают следующие пункты:

1. Разработаны решения проблем выявленных в законе РА о ГЧП, в отношении: (а) статуса частного партнера, иностранного участия в организации, реализующей проект, распределения рисков между частными и государственными партнерами в случае финансового краха компании, реализующей проект; (б) устранения барьера квалифицированного как «ограничение» на свободное перемещение капитала или инвестиций в ЕАЭС, выявленного в законодательстве государств-членов союза по правовому регулированию ГЧП.

2. Разработаны основные критерии и механизмы по локализации организационных и финансовых схем проектов ГЧП на региональном, муниципальном и межмуниципальных уровнях в РА.

3. Разработана концепция и подходы финансирования и устойчивой платформы инвестиций для проектов ГЧП в РА, ориентированных на привлечение средств для капитальных вложений по схеме секьюритизации активов, определены критерии базовых активов для секьюритизации и установлены эффективные подходы обслуживания ценных бумаг, обеспеченных активами.

4. Разработан комплекс показателей, оценивающих изменение финансового положения или «жизнеспособности» компании, реализующей проект ГЧП, в связи с оценкой потенциала капитальных затрат при секьюритизации активов.

Подходы и решения, предложенные в диссертации, направлены на устойчивое развитие, повышение конкурентоспособности и эффективности инфраструктурных секторов экономики РА на основе ГЧП. Результаты диссертации могут служить основой для разработки и реализации эффективных мер государственной поддержки программ ГЧП в РА, для совершенствования законодательства о ГЧП, а также проведения исследований по вопросам ГЧП и их программ.

## SARGSAYN GOR TIGRAN

### FORMATION OF PUBLIC-PRIVATE PARTNERSHIP EFFECTIVE MECHANISMS (ON THE MATERIALS OF THE RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – «Economics, Management of Economy and its Spheres».

The defense of the thesis will take place on the 8<sup>th</sup> of June, 2021, at 14<sup>00</sup> o'clock, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

#### ABSTRACT

In the modern world, the institution of public-private partnership (PPP) is one of the most effective ways to achieve the goals of sustainable development for all the countries. PPP creates a new institutional environment with partnerships and plays an important role in the development of market structures and the economy as a whole. In this regard, in most countries, regardless of their level of development, PPPs are seen as the best opportunity to provide basic infrastructure services that contribute to increased investment, sustainable economic growth, social infrastructure development and poverty reduction.

**The object of the study** is PPP and its programs.

**The subject of the study** is the improvement of state regulation of PPPs, the localization of organizational and financial schemes and mechanisms used in PPP projects in international practice, as well as the development of a sustainable investment platform for PPP projects in Armenia.

**The purpose** of the thesis is to develop approaches and mechanisms for improving state regulation of PPPs in RA, an exposition of organizational and financial schemes used in PPP projects in international practice, as well as the development of tools for an effective investment platform for implementing PPP projects on the national and regional levels.

To solve the aforementioned goals, certain tasks and problems were solved for the implementation of effective schemes and a matrix for financing PPPs. Among the most important tasks are the following:

- to identify conceptual and theoretical and methodological approaches and principles to the formation of PPP;
- to identify approaches to the legislative regulation of PPPs and the types of implementation of their programs in international practice;
- analyze the PPP programs implemented in the Republic of Armenia, as well as give their general characteristics;
- to analyze the state of legal regulation of PPP in the Republic of Armenia, the main directions and features of the implemented sectoral programs;
- to develop the main provisions and mechanisms for creating viable PPP programs in the RA, including ways and approaches to the problems of legislative regulation.
- to develop mechanisms for the implementation and activation of schemes for organizing and financing PPPs for regional programs of the Republic of Armenia;

- to develop ways to implement mechanisms for structured financing of PPP programs and tools for its assessment.

The most important results of the research, containing **scientific novelty**, include the following items:

1. Solutions to the problems identified in the RA Law on PPPs were developed in relation to: (a) the status of a private partner, foreign participation in the organization implementing the project, the distribution of risks between private and state partners in case of a financial collapse of the company implementing the project; (b) eliminating the barrier qualified as a “restriction” on the free movement of capital or investment in the EAEU, as identified in the legislation of the member states of the legal framework for PPP regulation.
2. The main criteria and mechanisms for the localization of organizational and financial schemes of PPP projects at the regional, municipal and inter-municipal levels in the Republic of Armenia have been developed.
3. The concept and approaches of financing a sustainable investment platform for PPP projects in the Republic of Armenia focused on raising funds for capital investments according to the securitization scheme of assets were developed, criteria for underlying assets for securitization were determined, and effective approaches to servicing asset-backed securities were established.
4. A set of indicators has been developed that assess changes in the financial situation or the “viability” of a company implementing a PPP project in connection with an assessment of the potential for capital costs in the securitization of assets.

The approaches and solutions proposed in the thesis are aimed at sustainable development, increasing the competitiveness and efficiency of the infrastructure sectors of the RA economy on the basis of PPP. The results of the thesis can serve as the basis for the development and implementation of effective measures of state support for PPP programs in the RA, for improving legislation on PPPs, as well as conducting research on PPP issues and their programs.

